«Վարկային պատմությունն իրենից ներկայացնում է տվյալ անձի վարկային վարքագիծը՝ գործող և մարված վարկերի/կրեդիտների, տվյալ անձի կողմից տրված երաշխավորությունների գծով:

Դրական վարկային պատմություն ունենալը կարևոր դեր է խաղում լիզինգի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման հարցում: Վերջինս հնարավոր է ձևավորել վարկերն/կրեդիտներն առանց ուշացումների մարելու, դրանք նպատակային օգտագործելու դեպքում:

Լիզինգի տրամադրման որոշման կայացման հարցում կիրառվում են FICO սքոր և Ընկերության կողմից մշակված սքոր վերլուծական ձևերը:

FICO սքորը հաճախորդի վարկային պատմության վերլուծության և վիճակագրական ուսումնասիրության արդյունքում հաշվարկված վարկային/կրեդիտային ռիսկի (վարկարժանության) թվային գնահատականն է, իսկ Ընկերության կողմից մշակված սքորը հաճախորդի վարկունակության գնահատման սքոր գնահատականն է, որի հիմքում ընկած են հաճախորդի վարքագծային և որակական ցուցանիշները:

Նշված սքոր գնահատականների վրա ազդող գործոններից են՝ հաճախորդի վարկային պատմությունը, գործող վարկերի/կրեդիտների քանակը, գումարը, նոր կրեդիտային հայտ ներկայացնելու հաճախականությունը, վարկերի/կրեդիտների հերթական վճարումներն առանց ուշացումների իրականացնելը, աշխատանքային փորձը, եկամուտների մեծությունը»:
www.acra.am
www.abcfinance.am